ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1957 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ավետիք Ադամյան

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԴԵՐԵ́ՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ ականավոր գրող Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թ. Ախալքալակում, որտեղ և ստացել է իր տարրական կրթությունը։ 1886 թ. Դերենիկ Դեմիրճյանի հայրը՝ Կարապետ Դեմիրճօղլյանը[1] ընտանիքի հետ միասին տեղափոխվում է Արդահան։ Այստեղ պատանի Դերենիկը շարունակում է իր ուսումը և գերազանց գնահատականներով ավարտում է տեղի ծխական դպրոցը։ Դեմիրճյանը ստեղծագործական առաջին քայլերը կատարում է այս դպրոցի վերջին դասարանում եղած ժամանակ։ Ուսուցիչները կարդալով Դերենիկի գրվածքները, նկատում են նրա հակումներն ու գրական ընդունակությունները և նրա հորը խորհուրդ են տալիս որդուն սովորելու ուղարկել Էջմիածնի ճեմարան։ Կարապետ Դեմիրճօղլյանը հոգատար դասատուների խորհուրդները անուշադրության չի մատնում և 1892 թ. հուլիսի 12-ին Արդահանից կաթողիկոսի տեղապահին մի դիմում է ուղղում, որով հայտնում է, որ չքավոր լինելու պատճառով անկարող է իր ուժերով ուսման ծարավ և ընդունակ որդուն ճեմարան ուղարկել սովորելու համար, ուստի ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, խնդրում է նրան ընդունել ճեմարան՝ որպես որդեգիր[2]։

«Աղերսեմ ի բարձր սրբազնութենէդ Ձերմէ,— գրում է Դեմիրճօղլյանը,— զի գթացեալ ի չքաւոր վիճակ իմ հաճեսցիք ընդունել զորդին իմ Դերենիկ Դեմիրճօղլեանց ի շարս որդեգիր աշակերտաց ճեմարանի սրբոյ Էջմիածնի. քանզի չքաւոր գոլով՝ անկարանամ հայթայթել զնիւթական միջոցս առ ի յագեցուցանել զպապակ ծարաւոյ ուսման որդւոյ իմոյ։

Ընդ գրութեանս համաձայն ծանուցման վարչութեան ճեմարանի սրբոյ Էջմիածնի առաջի առնեմ բարձր սրբազնութեանդ զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի, իսկ զկնտան առըլիս որպես բնակիչ յայսկոյս Կովկասոյ, ունեմ մատուցանել ի գրաւ ի ներկայացուցանել որդին իմ Դերենիկ յօգոստոս ամսոջ»[3]։

Բացի Կարապետ Դեմիրճօղլյանի դիմումից, հիշյալ հարցի առթիվ 1892 թ. օգոստոսի 31-ին Գեորգյան ճեմարանի տեսչին մի դիմում է գրել նաև Արդահանի հայոց միդասյան դպրոցի հոգաբարձությունը։ Դիմումի մեջ նշվում է, որ Դերենիկ Դեմիրճյանը սովորել և գերազանց գնահատականներով ավարտել է Արդահանի դպրոցը։ Այս փաստաթղթից էլ պարզվում է, որ Դ. Դեմիրճյանը

---

[1] Մանկական և պատանեկական տարիներին Դերենիկը նույնպես գրվել է Դեմիրճօղլյան։

[2] Դ. Դեմիրճյանը երկու տարի սովորում է Գեորգյան ճեմարանում։ Նրա աշակերտական գործը գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի Արխիվային բաժնում։ Գործում գտնվում են մի քանի վավերագրեր։ Հիշյալ գործից վերցրինք սույն հոդվածում մեջ բերած վավերագրերը։

[3] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գեորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 7, վավ. № 89, էջ 3։

դպրոցում սովորելու ժամանակ մի շարք բանաստեղծություններ է գրել, որոնք խորը տպավորություն են թողել ուսուցիչների վրա, և որ նա միաժամանակ աչքի է ընկել նկարչության և երգեցողության մեջ։ Հոգաբարձությունը, պատանի Դ. Դեմիրճյանի գրվածքներից ելնելով՝ գալիս է այն համոզման, որ եթե նա շարունակի իր ուսումը, ապա կլինի հայկական ապագա գրականության պայծառ աստղերից մեկը, որի համար հոգաբարձությունը միջնորդում է տեսչի առաջ և խնդրում, որպեսզի վերջինս անպատճառ Դ. Դեմիրճյանին ընդունեն ճեմարան սովորելու։

«Ամսույս 28-ն Արդահանից ուղղորդյան իր հոր հետ աշակերտ Դերենիկ Դեմիրճողլյանցը հարցաքննվելու և որոշվելու Արրազնության տեսչության հանձնած ճեմարանը։ Հոգաբարձությունս տարիների ընթացքում մոտիկ ծանոթ լինելով իր աշակերտի ինչպես վարք ու բարքի, նույնպես ուսման և հառաջադիմության մեջ ունեցած բարձր ու հազվագյուտ հատկությունների կողմից, շտապեց հաղորդել սրբազնությանդ հետևյալը։ Աշակերտ Դերենիկ Դեմիրճողլյանցը համենայն հաջողությամբ և պարգևատրությամբ ավարտել է հոգաբարձությունս խնամից հանձնած դպրոցը, ջանասեր է վերին աստիճանի, օժտված է ասավածատուր բնածին ձիրքերով, ունի նախանձելի ընդունակություն և զարմանալի ձգտում դեպի կրթություն և լուսավորություն։ Թե իր օրինակելի վարք ու բարքով, թե յուր համեստ բնավորությամբ, թե յուր բառմաթիվ նախանձելի հատկություններով միանգամայն գրավել է թե իր ուսուցիչների, թե հոգաբարձությունս և թե բոլոր հասարակության ուշադրությունը։ Եղել է եկեղեցու զարդ իր դուրեկան ձայնով — շնորհալի երգիչ է, նկարիչ է, եթե դատի տակ առնել դրա գրածները, ոտանավորները, չենք սխալվի որ դա ապագայում հայ գրականության մեջ լինելու է մի փայլուն աստղ։ Ի հաստատություն այս գրածների հույժ ցանկալի է հարցաքննության ժամանակ հայոց լեզվից շարադրության համար դրան տրվի մի սրեէ նյութ։ Տարաբաղդաբար այս շնորհալի աշակերտը, լինելով աղքատ ծնողաց որդի, չի կարողանում իր բուռն զգացմունքներին բավականություն տալ, շարունակելով իր ուսումը ավելի բարձր դպրոցում։ Ահա այդ պատճառով աղքատ հայրը ուսումնասիրաբար որդու ձեռքից բռնած, դիմելով Ձեզ և Ձերդ սրբազնության տեսչության տակ գտնված ուսումնական խորհրդի գթության, աղերսում է Ձեզանից ողորմածաբար բաց անել Գևորգյան ճեմարանի դռները այս ուսումնասեռ աշակերտի առաջ և ընդունել նրան գիշերօթիկ աշակերտների կարգում, որով շնորհած կլինիք այդ անբախտին նոր կյանք և կենդանություն, իսկ նրա աղքատ ծնողացը կատարյալ բախտավորություն։ Հոգաբարձությունս քաջ ծանոթ լինելով հիշյալ աշակերտի արդյունավոր ընդունակության հետ, բոլորովին վստահ է, որ ապագայքն սա ճեմարանի պարծանքներից մեկը կլինի և պատիվ կբերե այդ սուրբ հիմնարկության։

Այս բոլոր հանգամանքները աչքի առաջ ունենալով, Հոգաբարձությունս հույս ունի, որ Դուք, սրբազան հայր, պիտի բարեհաճեք հարգել հոգաբարձությանս ամենախոնարհ միջնորդությունը և չենք տալ մեր միջնորդության այնպիսի վճիռ, որ աղքատ հայրը իր անբախտ որդու ձեռքից բռնած, արտասվելով կրկին Արդահան կվերադառնա դատարկաձեռն։ Այդ օրը կլինի հիշյալ աշակերտի անբախտության սկիզբը»[1]։

[1] Հայկական ՍՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 7, վավ. № 89, էջ 13։

Ինչպես հայտնի է Գևորգյան ճեմարանում դասավանդվող որոշ առարկաների սխոլաստիկ բնույթի, ռեակցիոն հայացքներ ունեցող որոշ ուսուցիչների և ճեմարանում սահմանված դաժան ռեժիմի պատճառով ուսանողների մեջ դժգոհություններ էին առաջացել և մի քանի անգամ լուրջ հուզումներ ու խլրտումներ էին տեղի ունեցել: Գևորգյան ճեմարանի պատմության մեջ ուսանողական ամենաուժեղ պոռթկումներից էին 1894 թ. դեպքերը: Այդ հուզումներին մասնակցողներից շատերին հեռացրին ճեմարանից, իսկ ոմանք էլ հեռացան իրենց կամքով:

Ահա իրենց կամքով հեռացող աշակերտների թվում էր նաև Դ. Դեմիրճյանը: Այդ մասին 1894 թ. հոկտեմբերի 3-ին ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին ուղղած դիմումում Դ. Դեմիրճյանը գրում է.

«Յանկանալով ճեմարանից հեռանալ իմ կամքով, խնդրում եմ տալ ինձ Դ դասարանի վկայագիր, ծննդական վկայականս և դրավականը, նույնպես ծաղկի վկայականս»[1]:

Դերենիկ Դեմիրճյանի աշակերտական գործում գտնվում է նաև ճեմարանից հեռանալու կապակցությամբ նրան տրված վկայականը, որից պարզվում է, որ 1892 թ. քննություններ տալով, ընդունվել է ճեմարանի երրորդ դասարան, երկու տարի սովորելուց հետո 1894 թ. փոխադրվել է հինգերորդ դասարան և իր խնդրի համաձայն հիշյալ թվականին ազատվել է ճեմարանից:

1894 թ. հոկտեմբերի 4-ին ճեմարանի տեսչի կողմից Դ. Դեմիրճյանին տրված վկայականում ասված է.

«Մատուցող սորին աշակերտ հինգերորդ դպրոցական դասարանի հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի Դեմիրճօղլեան Դերենիկ Արդահանցի յամսեանն սեպտեմբեր 1893 ամի ընկալեալ եղև ի թիւս աշակերտաց դպրոցիս, և ըստ նախընթաց հարցաքննութեան՝ եմուտ յերրորդ դասարան: Յամսեանն յունիսի 1894 ամի փոխադրեցաւ ի հինգերորդ դասարան և յամսեանն հոկտեմբերի 1894 ամի ըստ խնդրանաց իւրոց արձակեցաւ ի ճեմարանէս:

Ի վարս յոյժ գովելի էր նա:

Ի ստուգութիւն որոյ յուսումնական խորհրդոյ դպրոցիս տուաւ նմա վկայականս այս պարտ և պատշաճ ստորագրութեամբ և դրոշմելով կնքոյ ճեմարանիս»»[2]:

1894 թ. Դ. Դեմիրճյանը թողնում է ճեմարանը և գնում Թիֆլիս, այնտեղ ընդունվում է Ներսիսյան դպրոցը, որը ավարտելուց մի քանի տարի հետո մեկնում է արտասահման բարձրագույն կրթություն ստանալու համար:

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 7, վավ. № 89, էջ 9:

[2] Նույն տեղում, էջ 11: